№ 215 Նոյեմբերի 18 (30) 1881 Նոյեմբերի 18 (30) № 215

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ **1882** ԹԻՒՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով։

ՊՐՕԳՐԱՄ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետօն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռ., իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ։ Հատով համարները 5 կոպէկ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարեգործական ընկերութիւն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Բագուից։ Նամակ Սղնախից։ Նամակ Ախալցխայից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ «Порядокъ» լրագրի թղթակցութիւն։ Ամերիկա։ Արտաքին լուրեր։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, Նոյեմբերի 15-ին, Արծրունու թատրոնում կատարվեցաւ „Հայոց բարեգործական ընկերութեան“ բացումն։ Թատրոնի դահլիճը լի էր հասարակութեամբ։ Այդ օրը պէտք է ընտրէին մի նախագահ և մի քարտուղար ընդհանուր ժողովի համար, որ կանոնադրութեան հիման վրա տարբէրը երկու անգամ է կայանում և նոյնպէս խորհրդի 9 անդամներին ու 5 էլ կանդիդատներին։ Նախագահ ընտրվեցաւ բժշկապետ Միքայէլ Շահ-Պարոնեանց և քարտուղար Գէորգ Զմշկեանց։ Իսկ խորհրդի անդամներ ընտրվեցան՝ Բժիշկ Բագրատ Նաւասարդեանց, Գաբրիէլ Սունդուկեանց, Ալէքսանդր Մանթաշև, գեներալ Դմիտրի Տէր-Ասատուրով, Ալէքսանդր Անանով, Յովհաննէս Զիթախով, Նիկոլայ Խոսրօեվ, Ալէքսանդր Մէլիք-Ազարեանց և Ներսէս Աթաբէկով։

Մեր պարտաւորութիւնն ենք համարում յայտնել որ ընտրութիւնները մեր կարծիքով շատ աջողված ընտրութիւններն են։ Մի կողմից ընտրված անձնաւորութիւններն էլ արժանի էին ընտրվելու, և բացի սրանից այն էլ լաւ է, որ վերջապէս հայոց հասարակութիւնը առաջին անգամ իր ընտրութիւնների մէջ գործադրում է աշխատանքի բաժանութեան սկզբունքը և ընտրում է մարդիկ, որոնք ուրիշ հազար ու մի գործերում խառն չեն, ինչպէս առաջ էր անում։ Առաջ ամեն բանի մէջ, ամեն ազգային կամ հասարակական պաշտօնների վրա ընտրվում էին միշտ մի և նոյն անձնաւորութիւններ։ Մի և նոյն անձինք և հոգաբարձու էին Ներսիսեան դպրոցում, և ամեն տեսակ բանկերում կառավարիչներ էին, և թատրոնական կոմիտէի անդամներ էին և ամեն տեսակ ընկերութիւնների խորհրդի անդամներ ու նախագահներ էին, և Դումայի ամեն տեսակ մանաժողովների անդամներ էին, և քաղաքային ու արուեստագիտական դպրոցի կոմիտէի անդամներ էին և այլն և այլն....

Ժամանակ է որ հասարակութեան բոլոր մտածող անդամները սկսէին մանակցել հասարակական և ազգային կեանքին և ոչ թէ միմիայն մարդկանց մի նեղ խումբ, մի քանի ազգականներից բաղկացած, որոնք հասարակական բոլոր պաշտօնները, բոլոր հիմնարկութիւնները իրանց ձեռք էին գցել։

Այսօրվայ համար մենք բաւականանում ենք այդ փոքրիկ նկատողութեամբ, աջողութիւն ցանկանալով նոր հիմված բարեգործական ընկերութեանը։

Ցանկանում ենք որ այդ ընկերութեան գործունէութենից հեռու լինի սահմանափակ ոգի, նեղ էկսկլիուզիվիզմ և մեր ամեն գործերում արիապետող զզուելի ֆանատիկոսութիւնը մի կողմից, իսկ միւս կողմից ազգականական խնամութիւնը։

Ընտրվածների անունները, համարձակվում ենք կարծել, գրաւական կարող են լինել մեր այդ յայտնած յոյսի։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Նոյեմբերի 10-ին

Վաղուց սպասած հայ ուսանողական մի խումբի ներկայացումը վերջապէս կայացաւ Նոյեմբերի 9-ին։ Պէտք է առաջուց ասել, որ այս տարի՝ հակառակ անցեալ տարիների փորձերին՝ ներկայացման դահլիճը մի նոր թատրոնում էր՝ ընդարձակ, լայն և ամենայն տեսակ յարմարութիւններով։ և կարծեմ այս հանգամանքը շատ նըպաստեց ներկայացման յաջողութեանը։ Դեռ 7 ժամից երեկոյեան հայ հասարակութիւնը խուռն բազմութեամբ լցվում էր թատրոն և տեղաւորվում որը փառաւոր օթեակում, որը ներքևում. ընդհանուր տրամադրութիւնը շատ գեղեցիկ էր. բոլորեքեան զգում էին, որ այդ օրը մի ազգային տօն էր, տօն—որի նմանը՝ ցաւակցաբար՝ շատ սակաւ է պատահում մեր ցուրտ հիւսիսում։ Այդ այն սակաւաթիւ՝ կասենք՝ երջանիկ օրերից մէկն է, երբ մոսկվաբնակ բազմաղան հայ հասարակութիւնը ժողովվում է մի տեղ, տեսնում է հայերէն ներկայացումն, ոգևորվում է ազգային հանդէսներով. տայ Աստուած, որ աւելի յաճախ լինէին այսպիսի հանդէսներ, որոնք կարող էին բարոյական կապ լինել Մոսկվայի բաժան և ցրված հայ հասարակութեան համար։

Այժմ անցնենք դէպի ներկայացումը. ներկայացման համար շատ գեղեցիկ ընտրողութիւն էր արած. խաղացին «Թուղթ խաղացողի կեանքը» —դրաման, մի վոդէվիլ հայոց լեզուով և հայոց կեանքի փոխադրած «Երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փող չունենք» և մի ռուսերէն վոդէվիլ—ֆարս «Бенгальскій тигръ»։

Ճշմարիտն ասած՝ մի հայի, որ միշտ կամ երկար ժամանակ ապրում է Մոսկվայում, որ իր պաշտօնի կամ ծառայութեան ստիպմամբ շատ քիչ է պատահում հայի շրջանում, հայի ընտանիքում և որը շատ անգամ զրկված է հայկական բարբառի հնչումից ամիսներով և աւելի երկար ժամանակ, մի հայի համար—ասում եմ—անպատմելի ուրախութիւն է փառաւոր թատրոնի բեմից լսել մաքուր հայոց լեզու՝ միացրած գեղեցիկ խաղի հետ, տեսնել մի ամբողջ կեանք—հայի կեանք, կամ հայոց կեանքի փոխադրած տեսարաններ, լսել անդադար կատակներ ու հանաքներ հային յատուկ սրամտութեամբ, լսել մի ամբողջ շարք հայոց վառվռուն ազգային երգերի —«Ծիծեռնակ», «Ինձ համար չէ», «Հայաստան երկիր դրախտավայր», «Իմ սիրելի զաւակունքս», միշտ գեղեցիկ և անմահ «Մայր-Արաքսի». այս այնպիսի զուարճութիւն է, որ շատ մեծ է, որ անգին է։ Եւ ինչպէս երևում էր, հասարակութիւնը գնահատում էր ուսանողների աշխատութիւնը. և ոչ միայն առատ առատ վարձատրելով խաղացողներին բուռն ծափահարութիւններով, այլ և մեծագին փոխարէն հատուցանելով իրանց առած տոմսակների համար և դրանով անշուշտ պսակելով այն գեղեցիկ բարեգործական նպատակը, որի առթիւ տրվեցաւ այս ներկայացումը—յօգուտ չքաւոր հայ ուսանողների։ Հանդիսականները հիացած էին ներկայացումից. և արդարև, ինչպէս մարդ չուրախանայ տեսնելով Ամալիայի դերի կատարումը այնպիսի գեղեցիկ կերպով գլուխ բերած, ինչպէս այդ կատարեց շնորհալի օրիորդ Մամիկոնեանը. երևում էր, որ նորա ամեն մի քայլը, ամեն մի խօսքը, ամեն մի մօնոլոգը առաջուց մտածած և ուսումնասիրած էր. մանաւանդ գեղեցիկ խաղաց օրիորդը երկրորդ արարուածում՝ խարդախ և անիրաւ վարների հետ և երրորդում՝ իր որդի Ալբերտի հետ տեսնվելուս։ Նոյնպէս շատ պատուական խաղաց Ժօրժը (պ. Քիրլեանը)՝ այն թղթամոլը, որ 30 տարի անդադար թուղթ խաղալով, վերջապէս մարդասպան է դառնում և ինքն էլ մեռնում է իր որդու ձեռից, երբ որդին չը գիտէր՝ թէ դա իր հայրն է։

Բոլոր այն տեսարանները, որտեղ պէտք է երևայ թղթամոլի կիրքը դէպի թուղթ խաղալը, նորա անյագ ծարաւը դէպի ոսկին, նորա խարդախ միջոցների դիմելը, սուտ վէքսիլներ գրելը, վերջապէս իր տուն տեղ ծախելը, իր տնաքանդութիւնը և մարդասպան դառնալը—այս բոլորը կատարվեցաւ մի անակնկալ յաջողութեամբ, որ զարմացրեց բոլորին։ Կարելի է ասել, որ պ. Քիրլեանը խաղում էր իբրև մի արտիստ, գեղեցիկ ուսումնասիրած լինելով իր դերի ամենամանր դէտալները։ Պակաս յաջողութիւն չունեցան իրանց դերերում և վարները (պ. Շահազիզեանց), Ղերմօնը (պ. Մամիկոնեանց), Ժօրժի հայր՝ Ծերունի Ժէրմանին (պ. Մեհանաջեանց), որ շատ սիրուն կատարեց ծերունու դժուար դերը, Լուիզան (օր. Ալաջալեանց), դատաւորը (պ. Զալդուչեանց), Ալբերտը—որի անունը չը գիտեմ ինչու նշանակած չէր աֆիշում—և փոքրիկ օրիորդ Բաբանոսեանցը, որ խաղում էր Ժօրժէտտայի՝ Ժօրժի աղջկայ դերը։

Վարների՝ այն խորամանկ, մարդախաբ սատանայի դժուար կատարելու դերը—պէտք է ճշմարիտը խոստովանել—շատ բաւական կերպով կատարվեցաւ։ Երևակայեցէք ձեզ մի դև, որ մտնում է մի անփորձ և դիւրախաբ ազնիւ երիտասարդի դամբը և երկար խարդախութիւններից և անազնիւ ու կեղտոտ միջոցներ գործ դնելուց յետոյ կորստեան զոհ է չինում այդ երիտասարդին—քանդելով նրա տունը և ինքն էլ իրան արժանի մահ գտնելով—ատրճանակից ըսպանվելով։ Այսպիսի դէպքերը, այսպիսի կեանքի փորձութիւնները միանգամայն անծանօթ են ուսանողին. և հիմայ որպիսի երևակայութիւն պէտք է ունենայ խաղացողը, որքան ձիրք և հմտութիւն, որ կարողանայ հանդիսականներին ներկայացնել այն իսկ չար դև Վարները։ Այս բոլորը նկատողութեան առած՝ պէտք է ասել, որ Վարների դերը շատ յաջող կատարվեցաւ։ աւելի—քան թէ կարելի էր պահանջել թատրոնասէր ուսանողից։

Վերևում յիշած անտրակտների մէջ երգած երգերով մեծ զուարճութիւն պատճառեցին հասարակութեանը պ. պ. Ափրիկեանց և Մադաթեանց։ Երկուսն էլ գեղեցիկ և բարձր ձայն ունեն. առաջինը баритонъ-теноръ, երկրորդը, теноръ։ Բայց ափսոս որ ոչ մէկը և ոչ միւսը չեն ուսումնասիրում երգեցողութիւնը իբրև արուեստ, այլ երգում են իբրև դիլետանտներ։ Ցանկալի էր, որ այդ պարոնները իրանց Մոսկվայում լինելուց օգուտ քաղէին և ազատ ժամերը նուիրէին երգեցողութեան՝ աւելի և աւելի կատարելագործվելով։ Առանց այն ևս հայերի մէջ գեղարուեստները շատ ստոր դրութեան մէջ են, ո՞վ պէտք է հոգա աշխատի կատարելագործելու և ծաղկեցնելու հայերի մէջ այդ արուեստները, եթէ ոչ այն անձինք, որոնք յարմարութիւն ունեն և միջոց։ «Մշակի» յորդորով Թիֆլիսում մի քանի հարիւր ռուբլի փող են ժողովում պ. Մօյինեանցի համար—ինչ է, որ նա Ս. Պետերբուրգ երթայ և կատարելագործվի երգեցողութեան մէջ։ Ահա ձեզ հաղիր ուսանողներ, որոնք ժամանակ էլ ունեն, յարմարութիւն էլ, ինչու՞ օրը գոնէ երկու ժամ չը պարապել երգեցողութեամբ. մանաւանդ որ Մոսկվայում կան և երգեցողութեան ընկերութիւններ և կոնսերվատորիա և այլ երգեցողութեան դպրոցներ։ Հայի անփոյթութիւն։

Չէ կարելի չը յիշել և մի երկու խօսք հայերէն ծաղրաշարժ վոդեվիլի մասին. ծիծաղկոտ քաղցածները—Դանտէն և Ֆրանսուա—(պ. Զալդուչեանց և Մեհանաջեանց) իրանց անդադար կատակներով և սրամիտ հանաքներով մեծ ուրախութիւն պատճառեցին հանդիսականներին. շատ լաւ էր և Կակուլի տրախտիրչիկը (պ. Ափրիկեանց)։ Ներկայացումից յետոյ եղաւ պարահանդէս, որ տևեց մինչև 3 ժամը գիշերվայ։ Պէտք է ճշմարիտը խոստովանած, որ այսպիսի յաջող ներկայացումն, այսքան բազմաթիւ հանդիսականներով և թատրոնի ամենայն տեսակ յարմարութիւններով սակաւ է պատահում ուսանողական ներկայացումներին. գոնէ այսպէս էր բոլորի կարծիքը, որոնք չնորհակալութիւն տալով ներկայացում տուող խմբին, ուրախ և գոհ թողնում էին թատրոնի դահլիճը։—Շնորհիւ մեր առատաձեռն հասարակութեան, որ հասկանում է ուսանողի դրութիւնը և միշտ օգնութեան ձեռք է մեկնում նրան—այս ներկայացումից զուտ օգուտ կը մնայ մօտ 600 ռուբլի՝ բացի բոլոր մանր և խոշոր ծախսերից, որոնք բաւականին շատ են։—Անտարակոյս այսքան համակրութեան և լիաբուռն առատաձեռնութեան օրինակների շարքում եղան և հատ հատ չնչին և անշնչան բացառութիւններ, խափանարար ձգտումներ, քսու բանսարկութիւններ և անվայել վարմունքներ. բայց.... աւելի լաւ է դրանց մասին լռել՝ «чтобы гусей не раздразнить»....

* * *

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Նոյեմբերի 11-ին

Բագուի մէջ արդէն ծրագրվել է մի պրոդրամա կազմելու «Շոգենաւական հայկական ընկերութիւն» անունով մի ակցիոնէրական ընկերութիւն շոգենաւեր գործածելու Կասպից ծովի վրա, որ պիտի ունենայ 80 ակցիա, իւրաքանչիւրը 1000 ռուբլի։ Այսօր ինչպէս մենք տեսանք ստորագրութեան թուղթը մինչև 40 բաժին ստորագրված էին և $^0/_0$25-ը տուած։ Մեզ շատ ուրախալի է տեսնել Բագուի մէջ մի այդպիսի ընկերութիւն, որ գլխաւորապէս բաղկացած է հայ երիտասարդ վաճառականներից, բայց դժբաղդաբար այդ 40 անձինքների մէջ մի երկուսը հաշիւ թէ կան որ ծանօթ լինէին շոգենաւական գործին, մնացածները մանիֆակտուրայի վաճառականներ են, գործակատարներ և այլն։ Խնդիրը այժմ նրանումն է թէ այդ 80 բաժին ունեցողների հետ կարելի է մի հաստատ գործ սկսել, որ իր սկսած օգուտը բերէ. մեզ պատահել է տեսնել մի քանի այդպիսի ընկերութիւններ, որ շատ կարճ ժամանակամիջոցում քանդվել են, որովհետև ամեն մի գործին անտեղեակ մարդ մի ձայն ունի այդ ընկերութեան մէջ և սկսելով զատ զատ դատողութիւններ տալ, գործի խանգարման պատճառ են դառնում։ Երանի թէ մենք սխալված լինէինք. միայն մենք թոյլ ենք տալիս մեզ նկատել, որ այդպիսի մի ընկերութիւն աւելի օգտաւէտ կը լինի այն ժամանակ, երբ կը միանան մի հինգ տասը մեծ հայ գործարանատէրեր փոխանակ հազարի, հինգ կամ տասը հազար տալով, իսկ պակաս գումարների համար ակցիա դուրս տալով, այդպիսով կարելի է ապասել հետևեալ օգուտներին. առաջին, որ իրանք գործարանատէրերը լինելով այդ ընկերութեան հիմնադիրները, կարող կը լինեն իրանց նաւթերը փոխադրել սեփական «նալիվնոյ» շոգենաւներով, ի հարկէ նշանակված մի տակսայով. երկրորդ՝ ստացված օգուտների նշանակված մասը դուրս տուած ակցիան կը ստանայ. բացի այդ չը լինելով ձայների մեծամասնութիւն գործին անտեղեակ մարդիկներից, գործը մաքուր և խոհեմութեամբ կը կատարվի։

«Մշակի» առաջարկութիւնը կազմելու Բագուի մէջ հայ գործարանատէրերից մի ուժեղ ընկերութիւն մրցելու Նոբէլի հետ, բաւական ազդեցութիւն ունեցաւ և համակրութեամբ ընդունվեցաւ այստեղի գործարանատէրերից, բայց կարելի է արդեօք համաձայնութիւն, կայացնել մի Կրասիլնիկեանի, մի Միրզոյեանի, մի ՃԸդնաւորեանի կամ որ և իցէ մէկի հետ, դժուար խնդիր է լուծելու. հայ վաճառականը թէև միլիոնատէր դարձեալ րիսկ չի անի մի ուրիշ հայի հետ մի ընդհանուր գործ սկսելու և շարունակելու. բայց եւրոպացին անում է այդ. նա չէ վհատվում եթէ առաջին արգելքների է հանդիպում և ՀԼամաներ է պատահում. նա տանում է տոկունութեամբ իր սկսած գործը և ստանում է իր սպասած օգուտները. բայց հայը մի գործի մէջ այդ համբերութիւնը չունի. վնաս արեց թէ չէ, նա կը թողնի այդ գործը։

Օրինակ մէկը նորակազմ «Հայկական շոգենաւական ընկերութեան» 80 ակցիոնէրներից մէկն է. հէնց տեսաւ մի փոքր անաջողութեան նշոյլ, նա իր ակցիան անմիջապէս մեծ զիջումով ծախելու է և յետ քաշվելու։

Ցոյս ունենք որ այդ բոլորը նորակազմ ընկերութիւնը իր նիստերում աչքի առաջ կունենայ։

Աբել Ապրեսեանց

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

—

Նոյեմբերի 12-ին

Տեղիս հայոց երկսեռ ուսումնարանների նոր հոգաբարձուների ընտրութիւնը կայացաւ ամսիս 8-ին։

Հասարակութիւնը ժողովված էր օրիորդաց ուսումնարանի դահլիճում, որտեղ ընտրութիւնից առաջ հոգաբարձութեան նախագահ Ստեփաննոս ա. քահ. Տէր-Ստեփաննոսեանցը հասարակութեանը հասկացրեց ուսման նշանակութիւնը, մայրենի լեզուի սովորելու անհրաժեշտութիւնը և ուսուցիչների ու հոգաբարձուների պարտականութիւնը։

Բարեկրօն նախագահը քաջ գիտենալով, որ ուսումնարանի բարեկարգութիւնը կախված է լաւ հոգաբարձուներից՝ առաջարկեց հինգ ուսեալ մարդիկ, որոնք են պ. պ. Ց. Գօզալեանց, Ա. Տէր-Մատթէոսեանց, Կ. Տէր-Մատթէոսեանց, Ծ. Լիանոզեանց և Ա. Սարգսեանց և խնդրեց այս հինգ անձերից ընտրել երեքը իբրև հոգաբարձու։ Բոլոր ժողովուրդը միաբերան ընդունեց նախագահի առաջարկութիւնը։ Նախագահը վերջացրեց իր խօսքը ասելով թէ՝ երբ նոր հոգաբարձուները կընտրվեն և կը հաստատվեն իրանց պաշտօնի մէջ, այն ժամանակ նրանք կարող են բոլոր հաշիւները ինձանից ստանալ։

Այդ միջոցին Եղիշէ քահ. Տէր-Աստուածատրեանցը մէջ ընկաւ և սկսեց մի քանի անկապ և անհիմն խօսքերով վրդովեցնել հասարակութեանը՝ յարձակվելով նախագահի և ուսուցիչների վրա։ Սա նախագահի վերաբերութեամբ ասեց, որ մինչև այժմս յայտնի չէ թէ մամավաճառութեան արդիւնքն և ուսումնարանի հաշիւները ում ձեռին են, պէտք է նախ և առաջ հաշիւ պահանջել։ Այդ ինչիցն է, որ տէր Եղիշէն մինչև այժմս չը գիտէ թէ ուսումնարանի հաշիւները և մամավաճառութեան արդիւնքը ում ձեռին է, քանի որ ամենքին լաւ յայտնի է, որ թէ մամավաճառութեան արդիւնքը և թէ ուսումնարանի տնտեսական մասը յանձնված է Ստեփաննոս ա. քահանային, որը ամենայն ջանք գործ է դնում ուսումնարանիս բարեկարգութեան համար, բայց շատ ենք ցաւում, որ սրան ոչ ոք օգնող չը կայ։ Մինչև այժմ մեր ուսումնարանի համար հրաւիրվում էր միայն հայոց լեզուի ուսուցիչ, իսկ ռուսաց լեզուի ուսուցիչը հրաւիրվում էր տեղիս քաղաքային ուսումնարանից, բայց քաղաքային ուսումնարանից հրաւիրված ուսուցիչները չիմանալով հայոց լեզուն՝ անյարմար էին մեր ուսումնարանի համար, այս պատճառաւ տէր-Ստեփանը հայ ուսուցիչ հրաւիրեց ռուսաց լեզուի համար։

Տէր-Եղիշէն ուզենալով ուսումնարանի պատիւը վայր ձգել հասարակութեան առաջ՝ սկսեց անխնայ յարձակվել ուսումնարանի և ուսուցիչների վրա ասելով, թէ թէլաւի ուսումնարանը և ուսուցիչները լաւ են մերից։ Բացատրութիւն ենք պահանջում տէր-Եղիշէից, թէ ինչ հիման վրա է վատաբանում մեր ուսուցիչներին, քանի որ տեղացիները չնորհակալ են ուսուցիչներից և քանի որ ինքը տէր-Եղիշէն ուսուցիչների գործունէութիւնից ոչինչ տեղեկութիւն չունի։ Այստեղից երևում է որ տէր-Եղիշէն պէտք է անձնական թշնամութիւն ունենայ նախագահի և ուսուցիչների հետ։

Տէր-Եղիշէն միշտ թշնամութիւն է ցոյց տուել դէպի ուսուցիչները (որովհետև ցանկութիւն ունի ուսուցչութեան, բայց չեն ընդունում)։ Այստեղից դնացած բոլոր ուսուցիչները անդամ են դնացել սրանից, դանդատվել են և պատժել են տուել, ինչպէս առաջ պ. Կ. Դաւթեանցը պատժել տուեց սրան մի քանի ամիս։

Մինչև անդամ Տէր-Եղիշէն այնպիսի միտք յայտնեց, որը ոչինչ կապ չունէր մեր ուսումնարանի հետ. այս միտքը ոչ թէ իր ընական դատողութեամբ էր, այլ լրագիրներից էր։ «Մշակը» խօսելով Թիֆլիսի համալսարանի վրա, ասում էր թէ պէտք է Թիֆլիսումը հիմնել վերջապէս մի համալսարան, որովհետև մեր որդիքը իրանց ուսման ծարաւը չյագեցնելու համար գնալով հիւսիսային երկիրներ, բոլորովին անասովոր կլիմայում—չեն դիմանում և մեռնում են ցրտից և չքաւորութիւնից։ Տէր-Եղիշէն մի և նոյն խօսքերը կրկնեց և այսաեղ. նրա կարծիքով մեր ծխական ուսումնարանը կարելի է դարձնել համալսարան։

Հասարակութիւնը ոչինչ չը հասկանալով տէր Եղիշէի խօսքերից և կարծելով թէ լաւ բան է ասում, ամենքն էլ կուրօրէն ընտրեցին նրան հոգաբարձու, սրա հետ ընտրվեցան և տէր-Ստեփանի առաջարկած մարդկանցից երկուսը—պ. պ. Ց. Գօզալեանց և Կ. Տէր-Մատթէոսեանց։ Զարմանալի բան է թէ ինչ հարկաւորութիւն կար տէր Եղիշէին հոգաբարձու ընտրելու, քանի որ ունենք զարգացած և ուսեալ մարդիկ, որոնք են նախագահի առաջարկածները։ Հասարակութեան այն մասը, (ընտրութեան ժամանակ ներկայ էին միայն 48 մարդ) որը ներկայ չէր ընտրութեան ժամանակ, խմանալով տէր Եղիշէի հոգաբարձու ընտրվելը—անվաւեր է համարում այդ ընտրութիւնը և պահանջում է երկրորդ օրինաւոր ընտրութիւն և ուզում է, որ տէր Եղիշէի փոխանակ ուրիշին ընտրեն, որովհետև սա անյարմար է հոգաբարձութեան համար։

Կատարեալ յաջողութիւն ենք ցանկանում հասարակութեանը, որպէս զի անեն երկրորդ օրինաւոր ընտրութիւն։ Ուստի խնդրում ենք թեմական վերատեսչին, որ ինքը գայ և անձամբ օրինաւոր ընտրութիւն անի հոգաբարձուների։

Մ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԻԽԱՑԻՑ

—

Նոյեմբերի 9-ին

Քաղաքի կենտրոնում Մարտաչայշասված ճորակի մէջ տարիներով հոտում է աղբը. այդ ճորակի վրա շինած են գաղտնի սպանդանոցներ և արտաքնոցների խողովակներ. պօլիցիան և քաղաքային վարչութիւնը միշտ կոյր և համր են ձևանում Ալեքսանդրեան և Լաշիխեան փողոցով անցկենալիս և եթէ մէկը ակնարկելու լինի Երանց այդ զազրալի աղբանոցի վրա, գուցէ ծաղրելու էլն ասելով՝ «դա օգտակար է առողջութեան, որովհետև բուժում է բարակացաւը», բայց իսկապէս ասում են քաղաքը միջոց չունի մաքրել տալու, կասսայում փող չը կայ և դատարկ հողեր էլ չը մնացին ծախելու։

Քաղաքիս մի քանի ընդարձակ փողոցները սալած են, միւսները ցեխերի որոգայթ են. դժբաղդաբար եթէ անցորդը գիշերով լապտեր չունենայ ձեռին՝ (քաղաքի լապտերները միմիայն իրանց շրջանակին են լոյս տալիս) անպատճառ առանց կրկնակօշիկի է տուն հասնում, մինը գուցէ երկուսն էլ ցեխի մէջ պահտալով։

Քաղաքային վարչութիւնից ընտրված կայ բաղարի վերակացու. չը գիտեմ դրա պարտականութիւնները, բայց մսագործն իր ընտրած կտորը, կամ ցանկացած գնովը է վաճառում միսը. սրիկաներին և բախկալներին արգելող չը կայ որ քաղաքից դուրս գիւղացու բերած մթերքը ձեռքից չը խլեն ճանապարհին և գինը թանգացնելից զատ, սկանդալներ չը հանեն խեղճ գիւղացու գլխին։

Աղքատների թիւը բազմանում է գաղթականներով. վերջինները ապրուստ և պատսպարան չունենալով, գիշեր, ցերեկ մերկ և բոբիկ մանում են գալիս փողոցներում և մուրալով պարապում։ Աղքատաց հոգաբարձութիւնը կորեց իր գործունէութիւնը, հրապարակական յօգուտ աղքատաց հանգանակութիւն անելը արգելվեցաւ մարմնաւոր իշխանութեան հրամանով. մտածող էլ չը կայ փոքրիկ բարեգործական ընկերութիւն մը կազմելու այդ խեղճերին կարեկից լինելու համար. եկեղեցին կարող է տալ ընդարձակ պատսպարաններ, իսկ քաղաքացին օգնել նիւթապէս։ Աղերսում եմ զգայուն և մարդասէր սրտերին աջակցել այդպիսի ընկերութիւն մը կազմելու։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են որ այս օրերս հասել է այդ քաղաքը Երուսալէմի հայոց վանքի մի վարդապետ, Մամբրէ անունով, յիշեալ վանքի անունով փողեր ժողովելու համար։

—

Նոյեմբերի 20-ին լինելու է կենդանիների հովանաւորութեան ԹԻՖԼԻՍԻ ընկերութեան ընդհանուր ժողովը։

—

Նոյեմբերի 15-ին, կիրակի օր, կայացաւ բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը Արծրունու թատրոնում։ Ընթերցողը կը գտնի այդ ժողովի մասին կարճառօտ տեղեկութիւններ և եղած ընտրութիւնների մասին մեր կարծիքը «Մշակի» այսօրվայ առաջնորդող յօդուածում։

—

Մեզ գրում են ՆՈՒԽՈՒՑ։ «Թուրքաբնակ, ուտիախօս և բազմահայ Նուխու ամբողջ վիճակի միակ հոգևոր ուսումնարանը այս տարի շատ անաջող ուսուցչական խումբ ունի կազմած։ Ուսուցիչներից ոչ մինը իր ծանր պաշտօնին յարմար չէ, ոչ մէկը նրանցից ոչ մի բարեկարգ դրպրոցի երեսը տեսած չէ։ Դորա պատճառը հոգաբարձուներն են, որոնք հասարակաց շահը և օգուտը թողած, իրանց անձնական օգտին են կամենում ծառայեցնել ուսումնարանը։»

—

ԴԱՐՍԻՑ մեզ գրում են։ «Այս տարի տեղիս հայոց հոգևոր դպրոցներում հրաւիրվեցան որպէս ուսուցիչ և վարժուհի պարոն և տիկին Ամատունիք։ Նրանց մասին մի քանի չարամիտ մարդկանց ձեռքով տարածված լուրերը կատարելապէս սուտ են։ Ամուսինները շատ լաւ են վարվում աշակերտների հետ և աշակերտներին նրանց տուած ամենախիստ պատիժը եղել է չարութիւն անողներին երբեմն անճաշ թողնելը միմիայն։ Ուսումնարանի տեսուչ պ. Ղազարեանն է։ Ղարսեցիները շատ գոհ են պարոնի ցոյց տուած եռանդից։ Կատարեալ զրպարտութիւն է որ իբր թէ Ամատունիք ծեծում են աշակերտներին։ Եթէ վերջապէս այդ դիտաւորութիւնն էլ ունենային, ոչ տեսուչը, ոչ էլ թեմական առաջնորդը երբէք չէին թոյլ տայ նրանց վարվել այդ ձևով մանուկների հետ։»

—

Լսում ենք որ այն օրից, երբ ԱՐՏՈՒԻՆԻ հայ-կաթոլիկների եպիսկոպոսը ճանաչվել է կառավարութենից որպէս օրինական առաջնորդ Անդրկովկասեան և Կովկասեան հայ-կաթոլիկների, այն օրից մեր հայ-կաթոլիկները այլ ևս կախում չունեն Սարատովի կաթոլիկ լատին եպիսկոպոսից, այլ կախված են միմիայն Արտուինի հայ-կաթոլիկ առաջնորդից։ Դա շատ ուրախալի է և այսուհետև մեր կաթոլիկ եղբայրները կարող են զարգանալ որպէս կաթոլիկ հայեր, առանց կորցնելու իրանց ազգութիւնը, իրանց մայրենի լեզուն իրանց եկեղեցական արարողութիւնների մէջ և իրանց դպրոցներում։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ հաղորդում են որ դիֆտերիա ցաւը, որ խոր արմատներ էր գցել Ս. Պետերբուրգի նահանգի մի քանի գաւառներում, այժմ, չնորհով բժշկական եռանդոտ օգնութեան, կատարելապէս ոչնչացրած է։

—

Ընթերցողները կարդալով երէկվայ հեռագիրը թէ մի մարդ բէվոլվէր էր արձակել գեներալ Զէրբէվինի վրա, գուցէ չը գիտեն թէ ինչ պաշտօն է վարում գեներալ Զէրբէվին։ Նա ներքին գործերի մինիստրի, կոմս Իգնատիեվի օգնական է և մի և նոյն ժամանակ քաղաքական յանցաւորների գործերը քննող մասնաժողովի նախագահ է։ Նա նոր էր նշանակվել այդ պաշտօնի վրա և կարճ ժամանակում քննել և վճռել էր մօտ 300 քաղաքական յանցաւորների հին գործերից, այսինքն այդ գործերի ընդհանուր թիւի մի չորրորդական մասը։ Ուրեմն նրա քննութեանը յանձնված քաղաքական յանցանքների գործերի ընդհանուր թիւը մօտ 1200 է։

—

Լուր կայ որ շուտով հիմնվելու է Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ մի նոր իգական արուեստագործական դպրոց, որի պրոգրամը Ռիգա քաղաքի դրպրոցի պրոգրամին համեմատ կը լինի։

—

Խոնարհաբար խնդրում ենք մեր հայ ուսանողներին, որոնք ուսանում են Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի կամ Աւստրիայի համալսարաններում, թարգմանել ռուսաց և այլ եւրոպական լեզուներով մեր լրագրի երէկվայ 114 համարում տպված «Դարձեալ մի ապացոյց» վերնագրով յօդուածը և աշխատել տպագրել տալ այդ յօդուածը կամ ամբողջութեամբ, կամ գոնէ նրանից արած քաղուածները, եւրոպական այլ և այլ լրագիրներում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Բերլինից „Порядокъ“ լրագրին հաղորդում են հետևեալը։ Նոյեմբերի 12-ին իշխան Բիսմարկ հասաւ Բերլին, որ նրան շատ դուրեկան ընդունելութիւն չը պատրաստեց։ Այդ օրը Բերլինի 4-դ և 6-դ ընտրողական շրջանների մէջ կրկնաքուէարկութիւններ կային, որոնց ժամանակ առաջադէմները դարձեալ յաղթող հանդիսացան։ Բեբել և Հազենկլեվեր սոցիալ-դէմոկրատները յաղթվեցան, չը նայելով, որ պահպանողականները մասամբ նրանց պաշտպանեցին։ Իրանց կուսակցութեան շահերի տեսակէտից

գործին նայելով, առաջադէմները վատ վարվեցին, որ ամեն միջոցներ գործ դնելով, թոյլ չը տուին բանւորներին ընտրել իրանց կուսակցութեան առաջնորդին չորրորդ շրջանի մէջ։ Առաջադէմների և նրանց յաղթութեան համար այդ մի տեղը բայխատագի մէջ ոչինչ նշանակութիւն չունի, մինչդեռ բանւորների համար մեծ և կրկնակի նշանակութիւն ունէր։ Նախ՝ բանւորները պէտք է ապացուցանէին իրանց կուսակցութեան գոյութիւնը Բերլինի մէջ և երկրորդ՝ ընտրել Բեբելին, որի անաջողութիւնը մեծ վիշտ պատճառեց ամբողջ Գերմանիայի բանւորներին։ Ավգուստ Բեբել անրիծ համարման տէր, կուսակցութեան առաջին ճառախօսը և բանւորների կուռքն է։ Բանւորները նրան պաշտում են. „մեր Ավգուստը“ նրանց առաջին մարդն է և „մեր Ավգուստի“ թշնամիները բանւորների ոխերիմ թշնամիներն են։ Եթէ առաջադէմները փոքր ի շատէ ուշադրութիւն դարձնէին բազմութեան համակրութեան վրա և իշխան Բիսմարկի նման չաշխատէին նրանց իրանց շահերին միայն ծառայեցնել, նրանք կամաւորապէս պէտք է թոյլ տային, որ բանւորների կուռքը յաղթող հանդիսանար։ Նրանք հակառակն արին։ Երկու շաբաթ առաջ, երբ նրանց հակառակորդները հակառաջադէմներն էին, նրանք այնպէս չէին մաքառում, ինչպէս այժմ աշխատում էին յաղթել բանւորների ներկայացուցչին։ Բացի ընտրողական բազմաթիւ ժողովներ կազմելուց, առաջադէմների հաւատարմատարները այնպէս էին գործում, կարծես հարցը կեանքի և մահուան մասին լիներ։ Այդ հաւատարմատարները անից տուն էին թափառում, դանում էին իրանց ընտրողներին, նրանցից մի քանիսին ոտքով և միւսներին առաջուց պատրաստված կառքերով տանում էին քուէարկելու։ Այդ բոլոր աշխատանքները աջողութեամբ պակվեցան. առաջադէմների ներկայացուցիչը յաղթեց 51 ձայների առաւելութեամբ։ Այդ մի տեղի համար բայխատագի մէջ առաջադէմները թշնամացրին իրանց հետ ոչ թէ միայն Բերլինի, այլ և ամբողջ Գերմանիայի բանւորներին։ Ինչ կը վերաբերի Բերլինի բանւորներին, նրանք հէնց այնտեղ յայտնեցին իրանց զգացմունքները։

Ամբողջ օրը հանդիստ անցաւ։ Մաքառումը սաստիկ էր։ Բոլոր կողմերի ընտրողները հազարներով դիմում էին ընտրողական արկղերին, բայց վէճեր կամ անկարգութիւններ չէին պատահում։ Ժամի 4-ին, երբ փակեցին գործարանները (այստեղ շաբաթ օրերը գործարանները 4-ին են փակվում) բանւորները բազմութեամբ լցնում էին ընտրողական բնակարանները և իրանց թւով զօրեղ, հաւատալով իրանց յաղթութեանը, մտնում էին հանդիստ, մինչև անգամ ուրախ։ Քուէարկելուց յետոյ նրանք մասամբ մնում էին մերձակայ գարեջրատները, մասամբ փողոցի վրա սպասում էին քուէարկութեան հետևանքին։ Վերջապէս 6 ժամին քուէարկութիւնը դադարեց և քուէների հաշիւը սկսվեց։ Մի ժամից յետոյ մի խումբի մէջ լսվեց Ասուած գիտէ ումից արտասանած խօսքերը. „կարծես Բեբել յաղթված է։“ „Սուտ է, անկարելի է, անպատճառ ընտրված կը լինի“, մի անգամից պատասխանեցին հազարաւոր բանւորներ։ Բայց նրանց համար սարսափելի լուրը անդադար կրկնվում էր և հաստատվում էր։ Ցանկարծ փողոցը լցվեցաւ բանւորներով. „անկարելի է, աղաղակում էր ամբոխը, ո՞վ ասաց, որ մեր Ավգուստը յաղթվեցաւ, ի՞նչպէս կարող էր պատահել։“ Եւ որքան անկեղծ վիշտ կար այդ բացականչութիւնների մէջ։ „Ցրվեցէք, ճանապարհը մի կապէք“, լսվեցաւ պոլիցիականների ձայնը։ Մի րոպէ բոլորը լռեցին, բայց ամբոխը չէր ցրվում, միայն լուռ ճանապարհ էր տալիս պոլիցիականներին։ Վերջապէս պաշտօնապէս յայտնվեցաւ, որ Ավգուստ յաղթված է։ Այս անգամ ամբոխի վիշտը կատաղութեան փոխվեց և յուսահատութեան տեղ, հետևեալ խօսքերը լսվեցան. „անամօթներ, հարստահարողներ, անիծված հրէաներ, ժողովրդի թշնամիներ։“ Այնուհետև սկսեցին քարեր գցել այն տան վրա, որտեղ քուէները հաշուում էին։ Իսկոյն հասաւ ձիաւոր պոլիցիան, բայց ամբոխը նրա վրա ուշադրութիւն չէր դարձնում։ Հետևակ պոլիցիականների հարուածներին ամբոխը հարուածներով էր պատասխանում, իսկ ձիաւորների վրա քարեր էր գցում։ Այդ ընդհանուր կռուի ժամանակ երբեմն լսվում էր. „դաւաճաններ, կաշառողներ, մեր Ավգուստը։“ Վերջացաւ նրանով, որ ամբոխին քշեցին և երկու հարիւր մարդ կալանաւորեցին։

Ի՞նչ հարկաւոր էր այդ բոլորը և ո՞ւմ կարող է նա օգտաւէտ լինել։ Միթէ առաջադիմութեան գործին, կասկածելի է։ Այդ ժամանակ քաղաքի միւս բաժնում մի ուրիշ աւելի մաքուր ամբոխ ուրախ ուրախ ուղևորվում էր առաջնակարգ հիւրանոցներից մէկը, երգելով յաղթական երգեր, որոնց մէջ յիշված էր ազատութիւնը, ժամանակի ոգին և այլ այդպիսի գեղեցիկ խօսքեր։ Այդ ամբոխին պատահեցի ես, երբ վերադառնում էի ընտրողական 4-դ շրջանից և ակամայ մտածեցի, որ ժամանակի ոգու մասին խօսել և արտայայտելը այդ ոգին երկու միմեանցից տարբեր գործեր են։ Ուղիղ երկու շաբաթ առաջ բանւորները հանդիպեցին Վիրխովին և նրան պատուելու համար մեծ ցոյց գործեցին, որ շատ զարմացրեց պահպանողականներին։ Վիրխով արտասուքները աչքերին շնորհակալութիւն յայտնեց և մի ճառով խոստացաւ հոգալ բայխատագի մէջ բանւորների շահերի մասին։ Նա ազնիւ մարդ է և կաշխատէ կատարել իր խոստումը։ Բայց թէ Վիրխով և թէ նրա կուսակցութիւնը շատ բան պէտք է անեն բանւորների համար, որ կարողանան մոռացնել տալ նրանց ընտրողական այդ վիրաւորանքը։ Առաջադէմները աւելի լաւ կանէին, եթէ այդ վիրաւորանքը չը հասցնէին նրանց, մանաւանդ որ իրանք առաջադէմները խոստովանում են, որ այժմեան բանւորները այն չեն, ինչ որ էին երեք տարի առաջ։ Ես երեկոյեան միայն գնացի ընտրողական մաքառման տեղը և միայն վերջը կարողացայ տեսնել։ Բայց իմ ծանօթ ռեպորտէօրներից մէկը, որ պարտաւորված հետևում էր ընտրութիւնների ընթացքին, պատմեց ինձ, թէ կանայք և երեխաները մինչև անգամ մասնակցում էին ընտրողական ցոյցերին։ 10—12 տարեկան երեխաները վազում էին զանազան ուղղութիւններով, գանում էին իրանց հայրերին, եղբայրներին, բարեկամներին և ղրդում էին անպատճառ քուէարկել։ „Գիտէք, ասում էր ծանօթս, երբէք կեանքիս մէջ ոչ ոք այդպիսի ապաւորութիւն չէ գործել, ինչպէս բանւորների այդ երեխաները։ Աչքերիս մէջ ակամայ արտասուք էր երևում, երբ տեսնում էի այդ փոքրիկ արարածներին, որոնք յետ ու առաջ էին վազում և իրանց ոգևորութեամբ միւսներին էլ ոգևորում։ Մանաւանդ աչքի էին ընկնում աղջկերքը։ Իմ տան մօտ գանվում է ուսումնարան։ Ժամի 12-ին այնտեղից դուրս եկան փոքրիկ աղջկերք, խեղճ հագուստով և փայտեայ կօշիկներով, դրանք բոլորն էլ բանւորների դուստրներ էին։ Նրանք անցնում էին փողոցով և, գետնին խփելով իրանց փայտեայ կօշիկները, կանչում էին. „Ընտրեցէք Բեբելին, ընտրեցէք Բեբելին, Ավգուստ Բեբելին։ Իսկ գարեջրատները լիքն էին կանանցով, որոնք թոյլ չէին տալիս իրանց ամուսիններին կամ եղբայրներին երկար նստել, ուղարկում էին նրանց քուէարկելու և ասում էին. „Տեսէք, չը վախենաք և չը դաւաճանէք ձեր կուսակիցներին։“ Այդպիսի երևոյթները այստեղ երբէք տեսնված չեն։ Ես ծնվել և ծերացել եմ Բերլինի մէջ, բայց ընտրողական ցոյցերին մասնակցող կանանց առաջին անգամն եմ տեսնում։“

Եւ ճշմարիտ արժանի է, որ այդ երեւոյթների վրա ուշադրութիւն դարձնեն այն մարդիկ, որոնց վիճակված է կառավարել ժողովրդին։

Իշխան Բիսմարկի մասին ես միայն ասացի, որ նա հասաւ Բերլին, մինչդեռ ամենքի ուշադրութիւնը նրա վրա է դարձրած։ Նրա հրաժարականի մասին շատ շատ են խօսում և աւելացնում են, որ կանցլերին ընդդիմադրում են բարձրաստիճան անձինք, որոնք ազատամիտ ուղղութեան են հետևում։ Ժողովրդի հասարակ դասը այդպէս է խօսում իշխան Բիսմարկի հրաժարականի մասին։ „Այդ առաջին անգամը չէ, երևի կամենում է իր կամքը կատարել և կը կատարի, զիջումներ կանեն, դարձեալ կը մնայ։“ Իսկ բարձրաստիճան անձանց ընդդիմադրութեան մասին ասում են. „սովորական երևոյթ է, երիտասարդները միշտ ազատամիտ են լինում։“

ԱՄԵՐԻԿԱ

Նորերումս մեծ բազմութեան ներկայութեամբ սկսվեցաւ յանցաւոր Գիտօի գործի դատաստանական քննութիւնը։ Գիտօի պաշտպան նշանակված է փաստաբան Բօբինզօն, որ խնդրեց դատարանից յետաձգել գործը, որպէս զի նա կարողանայ իր համար օգնական գտնել և վկաներ հրաւիրել։ Գիտօ վեր թռաւ իր տեղից և պահանջեց, որ դատարանը լսի նրա սեփական պաշտպանութիւնը։ Բօբինզօն փորձեց նրան ընդմիջել։ Բայց Գիտօ պատասխանեց. „հանգստացէք, ես ինքս կը վերջացնեմ իմ գործը“։ Նա մի ձեռագիր հանեց և պատրաստվեցաւ կարդալ իր պաշտպանութիւնը, բայց դատաւորը յայտնեց, որ այդ վաղաժամ է։ Մեղադրող կողմը համաձայն չէր յետաձգել գործը։ Պրօկուրօրի ճառի ժամանակ Գիտօի փեսայ Սկովէլ հազիւ էր կարողանում յանցաւորին լուռ պահել։ Սկովէլ համաձայն չէր Բօբինզօնի հետ գործի յետաձգութեան մասին։ Գիտօ վեր կացաւ և բարկութեամբ ասաց. „ես այս բոլորը ձեր պատասխանատուութեանն եմ թողնում։ Ես ասացի Բօբինզօնին, որ նա իմ գործը չընդունէ, եթէ չէ կամենում այնպէս վարվել, ինչպէս ես եմ ցանկանում։“ Երբ Բօբինզօն նորից կամենում էր խօսել։ Գիտօ բացականչեց. „ինձ հարկաւոր չեն Բօբինզօնի ճառերը, մինչև չը խնդրի ինձանից խօսելու թոյլատուութիւն“։ Պահապանները ստիպեցին յանցաւորին նստել։ Դատարանը համաձայնեց գործի քննութիւնը յետաձգել մի շաբաթով։ Գիտօ յայտնեց, որ Բօբինզօն ընդունել է նրա գործը առանց իր համաձայնութեան և պահանջեց, որ նա հրաժարվի պաշտպանութենից։ Դատարանը վճռեց առաջ երդվեալ դատաւորների ցուցակը կազմել։ Գիտօ մինչև վերջը պահանջում էր, որ նրան լսեն։ Նրա վարմունքը շատ վատ տպաւորութիւն գործեց ներկայ եղողների վրա և շատերին համոզեց, որ նա խելագար է ձևանում։ Այն ձեռագիրը, որ նա կամենում էր կարդալ, պարունակում է պատճառները, որոնք ստիպեցին Գիտօին սպանել Գարֆիլդին։ Դատարանի նիստը շարունակվում էր ամբողջ օր։ Յանցաւորը մի նամակ գրեց և ուղարկեց լրագիրներին տպելու համար։ Այդ նամակով Գիտօ մերժում է Բօբինզօնի իրաւունքը իր գործը պաշտպանելու համար, խնդրում է բոլոր փաստաբանների օգնութիւնը, խոստանալով նրանց վարձատրութիւն նուիրատուութիւններից և այլ աղբիւրներից։ Սկովէլ յայտնեց դատարանին, որ նա չէ հաւանում այդ նամակը, բայց Գիտօ ասաց, որ ինքը ոչ ոքի խորհուրդների պէտք չունի։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրները հաղորդում են, որ սպանիական պարլամենտում հանրապետականների առաջնորդը, Կաստելիար, մէկ գեղեցիկ ճառ խօսեց, որի մէջ գովասանքով էր խօսում Սպանիայի միաստութեան մասին։ Կաստելիար բացատրեց, որ ինքը երբէք չէ կարող փոխել իր դեմոկրատական և հանրապետական համոզմունքները։ Նա ասաց որ ներկայ կառավարութիւնը կոչնի ազատ հիմնարկութիւնների զարգացմանը, և հանրապետականները պէտք է օգուտ քաղեն դրանից ժողովուրդը կրթելու և նախապատրաստելու համաժողովրդային ձայնատուութեան և կատարեալ ինքնավարութեան համար։ Կաստելիար սաստիկ յարձակվում էր կղերական պատգամաւորների վրա, որոնք պապի աշխարհական իշխանութիւնը պաշտպանում են, և աղաչում էր սպանիական ազատ կառավարութեանը օգնել Իտալիային վերջնականապէս վռնռելու եկեղեցին պետութիւնից բաժանելու խնդիրը։ Յետոյ նա ասաց որ Սպանիայի և Իտալիայի, եկեղեցու և արմատականութեան մէջ կատարեալ ներդաշնակութիւն պէտք է թագաւորէ։ Հռոմը եռանդով յարձակվում էր կարլիստների վրա և պաշտպանում էր ազգային միութիւնը հիւսիսային նահանգների բաժանվելու ձգման դէմ։ Նա միջոցներ ցոյց տուեց, որոնցով կարելի կը լինի ներքին պատերազմի առաջն առնել, և պաշտպանում էր ժողովրդական լուսաւորութեան մինիստրի շրջաբերականը. նա պաշտպանում էր նոյնպէս և համալսարանի անկախութիւնը և գիտութեան իրաւունքները։ Մինիստր-նախագահը պատասխանեց այդ ճառին պաշտպանելով թագաւորական ցեղը և կրիտիկայի ենթարկեց Կաստէլիարի հանրապետական յայտնութիւնները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 Նոյեմբերի։ „Порядокъ“ հաղորդում է որ յարուցված է խնդիր փակել Լայպցիգի Ֆիլօլօգիական ռուս սեմինարիան, աչքի առաջն ունենալով նրանից սաացվող աննշան օգուտը և միւս կողմից նրա վրա արած մեծ ծախսերը։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը համաձայնութիւն յայտնեց սեմինարիայի փակման համար։ „Новое Время“ հաղորդում է որ դիտաւորութիւն կայ նշանակել սենատորական ռեվիզիաներ Կովկասում, Թուրքէստանում և Օլոնեցկայա նահանգում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 Նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր., երկրորդ 91 ր., երրորդ 92 ր., չորրորդ 90 ր. 75 կ., ներքին առաջին փոխառութեան տոմսակ 221 ր., երկրորդ 214 ր. 25 կ., արևելեան առաջին 89 ր. 75 կ., երկրորդ 89 ր. 75 կ., երրորդ 89 ր. 87 կ., ոսկի 7 ր. 73 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 25,62 պէնս, ռուսաց 100 ռուբլ Համբուրգի վրա արժէ 218 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 270 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտասահմանից եկած մի վարպետ շինում է պատրաստ և գաքազով ընդունում է էժան ու լաւ քան թէ ուրիշներ, կենդանիկերպ ծաղիկներով զանազան տեսակ գերեզմանական արձաններ: Հավլաբար, Շիրածխանայի վերի ծայրը, ապտէկայի կարգը № 32 խանութը:

6—15

Երաժշտական խանութում, որ գտնվում է Արծրունու գալլերէայում, բէատոբանի մօտ, երաժշտական իրերով առատութը շուտով կրճատելու պատճառով, այս նոյեմբերի 6-ից սկսած վաճառվում են սաստիկ արժան գներով նոտեր, երաժշտական գործիքներ, ջութակներ, ֆլէյտաներ, կլարնէտներ, վիօլօնչէլներ, գիտարներ և այլ երաժշտութեան վերաբերեալ իրեր բուրլուց մինչև 80 ԿՈՊԷԿ ԶԻԶՈՒՄՈՎ:

6—10

ԲԱԹՈՒՄԻ
ԿՈՄԻՍԻՕՆԷՐ
ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապսպրանք:

13—20

ՌՈՒՍԱՑ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԿՐԱԿԻ դէմ ապահովում է շինութիւններ, ապրանքներ, պահեստներ, գործարաններ գիւղատնտեսական շինութիւններ և մըթերքներ: Կովկասի համար գործակատար Պ. Պ. ԲԵԺԱՆԲԵԿ: Գրասենեակը գտնվում է Երևանսկայա հրապարակի վրա քաղաքային տան մէջ առաւօտեան 10—2 ժամը և երեկոյեան 6—8 ամեն օր: ՓՈԽ-ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐ. Քութայիսում Հ. Պ. Բէժանբեկ, Փոթի Ի. Գ. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆ, Ախալցխա Պ. ՉԱԹԱԼԲԱՇԵՎ: Նոյն տեղը ապահովուած են ներքին 5% առաջին և երկրորդ փոխառութեան ՏՈՄՍԱԿՆԵՐԸ 55 կ. Ս. Պետերբուրգի Ի. Վ. ԻՒՆԿԵՐ բանկային տան յանձնարարութեամբ:

(Հ. Շ.)

ВЪ ЭРИВАНИ

Окончившій курсъ среднеучебнаго заведенія даетъ уроки по всѣмъ предметамъ **Гимназіи**, а также по **нѣмецкому и французскому** языкахъ.

Узнать въ книжномъ магазинѣ Г. Гуламирянца.

4—5

ԽՈՍԻՖ ԵԱԿՕՎԼԵՎԻՉ ԻԼԻԱՇԵՎԻՉ ԾԱԽՈՒՄ է շատ ձեռնտու գնով 345 քառ. սաժ. հող, երկարութեամբ փողոցի վրա 23 սաժէն, իսկ լայնութեամբ 15 սաժ., կամ այդ հողի մի մասը Բագու-Թիֆլիսեան երկաթուղու կայարանի: Ցանկացողները կարող են տեղեկանալ Իլլիաշեվիչի մօտ, որ բնակվում է Կովկասի ճանապարհական հաղորդակցութիւնների վարչութեան տան կից, տուն Բարնովի № 9:

2—3 (2)

Կուկիոյ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ „Թանգոյեան" ուսումնարանի վարչութիւնը յայտնում է, թէ նոյն դպրոցումը նշանակված է աճուրդ նոյեմբերի 22-ին առաւօտեան 10 ժամին, նոյն եկեղեցապատկան 12 № կրպակները և սենեակները կապալաւ տալու համար:

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹԷՅ, կակաօ, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուգօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԶԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակալներ, կլէօնկա, ԹԱՄՔԵՐ, սանձեր, ուլթօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսրբիչներ, թաշկինակներ, կանանց գուլպաներ, մարդկերանց գուլպաներ, տուալետի սապօն, հոտաւէտ ջրեր, շէրբեթ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՅ.** պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՉՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., ռէվօլվերներ 4—34 ր., ԲՈՒԼ-ԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, ալբօմներ կիսագնով, ֆիլտրաներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և ռէվօլվէրների Թիֆլիսում:

51—100

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում լինում է 9—1 ժամը:

Ամենայն օր Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում ընդունում են հիւանդներին հետևեալ բժիշկները.

Հ ե լ դ ի շ 9—10 ժամը խիրուրգիական, սիֆիլիտիկական և կաշու հիւանդութիւնների: Դ ա ն ի է լ բ է կ օ վ և Լ ի ս ի ց ե վ 10—11 ժամը ներքին և ջղային հիւանդութիւնների: Գ ա վ ր օ ն ս կ ի 11—12 ժամը մանկաբարձական և կանանց հիւանդութիւնների: Կ ո ւ դ չ ի ն օ վ ի չ 12—1 ժամը սիֆիլիտիկական և ներքին հիւանդութիւնների: Բացի այդ Գ օ ր ա լ ե վ ի չ երկուշաբթի օրերը ներքին հիւանդութիւնների: Մ ի ն կ և վ ի չ երեքշաբթի և ուրբաթ օրերը 9—10 խիրուրգիական հիւանդութիւնների: Վ ե ր մ ի շ ե վ երեքշաբթի և ուրբաթ օրերը 10—11 ժամը ներքին հիւանդութիւնների: Ր է յ խ երեքշաբթի և շաբաթ 10—11 ժամը աչքերի հիւանդութիւնների: Բ ա բ ա յ ե վ երեքշաբթի և շաբաթ 12—1 ժամը ջղային և ներքին հիւանդութիւնների: Ք ի ւ չ ա ր ե ա ն ց 1-ն չորեքշաբթի օրերը 11—12 ժամը խիրուրգիական, ականջի և քթային հիւանդութիւնների և շաբաթ օրերը սիֆիլիսի միզային-սեռական օրգանների հիւանդութիւնների: Տ ա ր խ ա ն օ վ երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ 11—12 ժամը ներքին հիւանդութիւնների: Կինբժիշկ Ր օ ի բ ո ւ լ երկուշաբթի և հինգշաբթի 12—1 ժամը կանանց հիւանդութիւնների:

Օ բ ր ե խ տ ատամի ցաւ ունեցողներին ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով: Ամեն օր բացի կիրակիից բժշկանոցի մէջ լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար: Բժշկանոցի դիրեկտոր:

Դ. Լիսիցեվ

ОТКРЫТА ПОДПИСКА
НА ГАЗЕТУ
„ДОНСКАЯ ПЧЕЛА"
ГОДЪ СЕДЬМОЙ.
на 1882 годъ

Съ 1-го января 1882 года „Донская Пчела" будетъ издаваться по той-же программѣ какъ издавалась въ предъидущіе шесть лѣтъ, два раза въ недѣлю.

Редакція, по мѣрѣ силъ и возможности выполняя обязанности провинціальной прессы, находитъ, что **„Донская Пчела"** уже достаточно знакома публикѣ, почему и считаетъ всякія рекламы положительно излишними.

ПОДПИСНАЯ ЦѢНА ОСТАЕТСЯ ПРЕЖНЯЯ:

Съ доставкою въ Ростовѣ н/Д.		Съ пересылкою иногороднимъ	
На годъ	6 руб.	На годъ	7 руб.
› 1/2 года	3 „ 50 к.	› 1/2 года	4 „
› 3 мѣсяца	2 „	› 3 мѣсяоа	2 „ 50 к.

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Подписка принимается въ конторѣ редакцій „Донской Пчелы" въ Ростовѣ на-Дону, на Большой Садовой улицѣ, въ домѣ И. А. Теръ-Абраміанъ. Иногородніе благоволятъ адресоваться: въ редакцію „Донской Пчелы" въ Ростовъ на-Дону.

Радакція покорнѣйше проситъ гг. иногороднихъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко разборчиво.

Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 25-го декабря сего 1881 года подписныя деньги за 1882 г., будетъ разосланъ БЕЗПЛАТНО, въ видѣ преміи, „ДОНСКІЙ-АЗОВСКІИ русско-армянскій календарь на 1882-й годъ.

Редакторъ-издатель **И. А. Теръ-Абрамянъ**

2—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ
ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Մաթեմատիքական ընթացք հայոց միջնակարգ ուսումնարանների համար: Մ ա ս ն ա ռ ա ջ ի ն (ա մ բ ո ղ ջ թ ո ւ ե ր) ԳՐԻԳՈՐ ՎԱՐԶԵԼԵԱՆ, հրատարակութիւն Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ լ ր ա գ ր ա կ ա ն գ ո ր ծ ա կ ա լ ո ւ թ ե ա ն

Գ Ի Ն Ն Է 40 Կ Ո Պ.

Վաճառվում է բացառապէս Թիֆլիսում՝ Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

Ուսումնարանները և գումարով առնողները ստանում են 20% զիջում:

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հետևեալ հասցէով. Въ Тифлисъ, газетное Агентство Шавердова.

6—10

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

106—150

ОБЪ ИЗДАНІИ

въ 1882 году въ г. Тифлисѣ еженедѣльнаго юридическаго журнала

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ".
(ГОДЪ ВТОРОЙ)

Журналъ, какъ и въ 1881 году будетъ выходить по ЧЕТВЕРГАМЪ, въ размѣрѣ до 2-хъ печатныхъ листовъ текста кромѣ приложеній, по прежней программѣ, въ объемъ которой входятъ **статьи по всѣмъ вопросамъ,** вытекающимъ **изъ теоріи и практики права и судопроизводства, перечень, изложеніе и обсужденіе важнѣйшихъ распоряженій и узаконеній правительства,** краткіе **отчеты** (а въ случаяхъ важныхъ, и стенографическіе) **о выдающихся судебныхъ дѣлахъ,** особенно интересныя **гражданскія рѣшенія,** случаи изъ судебной жизни и практики **(смѣсь) корреспонденціи** юридическаго содержанія, **городская хроника,** перечень **новыхъ книгъ** юридическаго содержанія и **обзоръ печати, тезисы касаціонныхъ рѣшеній:** Правительствующаго Сената и Тифлисской Судебной Палаты, **судебный указатель** и пр.

Заботясь о посильномъ выполненіи своей программы, журналъ заручился сотрудничествомъ, сверхъ многихъ лицъ судебнаго вѣдомства, также и нѣкоторыхъ профессоровъ—юристовъ.

Редакція журнала Тифлисъ, Ново-Бебутовская ул., д. № 6.—Администрація (для пріема подписки, объявленій и розничной продажи)—Тифлисъ, Сололакская ул., д. № 10—**Подписная цѣна на журналъ,** съ доставкою и пересылкою, на годъ—10 р. на 9 мѣс.—8 р. 20 к., на 6 мѣс.—6 р., на 3 мѣс.—3 р. 20 к., на 1 мѣс.—1 р. 20 к. Разсрочка въ платежѣ денегъ—по соглашенію съ администраціею журнала. Подписаться можно съ 1-го числа каждаго мѣсяца, и не далѣе конца года.—Отдѣльные нумера—по 25 к.—Объявленія, казенныя и частныя, по таксѣ за занимаемое мѣсто.—Иногороднихъ просятъ обращаться исключительно въ Администрацію журнала.

Издатель **А. Френкель,** присяжный повѣренный.

Редакторъ **А. В. Степановъ**

2—3

Дозволено цензурою, Тифлисъ 17 Ноября 1881 года.
Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго